



ՊԻԼԻՋԱՆԻ ԲԱՆՊԱԴՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԴՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

ԿԿ Տալիսի՝ Ձայրը Ք՝Գլխըսն Այսպիչնն ՅՅ հեռ. (994) 713394 e-mail info@nec.gov.am, secretary@nec.gov.am

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ

գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենին

13 Ապրիլի 2015թ.

Դիմում

Հարգելի Պատրիկ Լորեն,

Դիլիջան քաղաքում վերջին տարիներին տագնապալի է դարձել խմելու ջրի հարցը: Տարվա կտրվածքով նորմալ խմելու ջուր համայնքն ստանում է ընդամենը մի քանի ամիս: Խնդիրը հատկապես բարդանում է ամառվա տապին, երբ խմելու ջուր ընդհանրապես չենք ունենում և անձրևային եղանակներին, երբ ստանում ենք սանիտարական նորմերին չհամապատասխանող պղտոր և տհաճ հոտով խմելու ջուր: Շատ դեպքերում ջրի պարունակության մեջ ԱՏԽՄ-ի ինդեքսը 0-ի փոխարեն կազմում է 46 /Վերջին անգամ մեր կենտրոնի կողմից համապատասխան հարցման ի պատասխան ՀՀԱՆ Առողջապահական պետական տեսչության Տավուշի մարզային կենտրոնի N04/11S-02/06 17.04.2014թ տվյալի/:

Այս ամենն ուղղակիորեն ազդում է համայնքի բնակչության, ինչպես նաև հազարավոր գրոսաշրջիկների առողջության վրա, ինչպես նաև խալիսլում է համայնքային անվտանգությունը: Խմելու որակյալ ջուրը ներկա ու ապագա սերունդների առողջության նախապայմանն է:

Վերը նշված խնդիրները և համապատասխան փաստերը, որը ներկայացնում ենք դիմումին կից՝ խախտում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 1 հունիսի 2004 թ. N 62-Ն «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները հաստատելու մասին և ՀՀ առողջապահության նախարարի 25.12.2002թ N 876 հրամանով հաստատված «Խմելու Ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակի ներկայացվող հիգիենիկ պահանջների» որոշումները:

Այս իրավիճակում համայնքի բնակիչներից վատ ծառայության համար ներողամտություն հայցելու կամ նրանց փոխհատուցում տրամադրելու փոխարեն, բնակիչներից գանձվում է 1մ/խ համար 180 դրամ:

Տարիներ շարունակ ջրամատակարարման բարելավման համար կատարվում են ներդրումներ՝ հիմնականում վարկային միջոցներով, բայց Դիլիջան քաղաքի խմելու ջրի որակը չի բարելավվում:

Հազարավոր դիլիջանցիների և հյուրերի անունից խնդրում ենք Ձեզ.

իրականացնել օրենքով սահմանված կարգով համապատասխան քայլեր՝

1. պարտավորացնել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին, ըստ տրված լիցենզիայի, կատարել իր պարտականությունները, հատկապես խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող

սպասարկման որակի նվազագույն պահանջները բավարարելու և խմելու ջրի որակի վատթարացումը կանխելու առումով:

2. վերանայել գնային քաղաքականությունը Դիլիջան համայնքի ջրամատակարարման համար, քանի դեռ ջրի որակը չի համապատասխանում պահանջված առավելագույն ցուցանիշին,

3. պարտավորացնել պատասխանատուներին կազմակերպելու համափարփակ հետազոտություններ, թե երկար տարիների այս վիճակն ինչ ազդեցություն է թողել համայնքի բնակչության առողջության վրա,

4. պարտավորեցնել պատասխանատուներին բաժանորդներին տրամադրել փոխհատուցում ստեղծված իրավիճակի համար:

Դիլիջանի Օրհուս կենտրոնի համակարգող



Ալբերտ Հարոյան